

համար. Պայան Կիրոյի երկիւղից այլևս չկարողացաւ Խարբերդու սահմաններու մէջ երևան գտ.

Միբարցիք Զարսանձագի բէկերուն ևս օգնած են, որնց տասն և հինգ հազար բանակին դիմագրած են Հնաբռով և փախուցած. Խամայէլ և Նէջիա բէկերն միմասնց հետ գժտեցան. Խամայէլ 5000 պատերազմող հաւաքած էր՝ տասն հազար ևս կառավարութեան կողմից օգնութեան եկած էր, Նէջիա սորա զէմ 5000 պատերազմող ունէր, պատերազմի համար փարձած էր Միբարցի հայ Պայան պարն իւր եղայրներով:

Այն երեկոյին Պամպար Բաղնիք գիւղն Նէջիա բէկի տունն երը կը հասնի, չետևեալ գիշերըն պատերազմն պիտի սկսէր, Նէջիա ցոյց կոյա Պամպարին մի թռչուն, կը հրամայէ որ հրացանով զարնէ, — սուութին (կտուց) մի զինիմ: ասելով հրացանը կարձակէ. կը զարնէ, բէկն ուրախանալով մի ոսկի կը տառ: մի ոչ խար ևս կը մորթէ, սորա վերայ կը նախահածեն 5000 պատերազմողք — Պամպար թռող գնայ պատերազմի, կասեն, Նէջիա կը յուսահատի, Պամպար իւր հինգ ընկերներով գիւղի եղրեն յարմար վայրիք գետնի մէջ գերեզմաններ կը փորէ, հինգ անձ ևս օգնական կը գտնէ, բէկն ձեռքը ծոցը դրած Պամպարի մօտ կը դայ, — Քու մի վախիր, բէկ, կատէ, էկուց գու թամասն կենիս, պիթուն թրես տի անցնիմ: իմ թուրս կէծակի կոյոր է. 100 ոսկի տուեցին, ցիմ տուեր:

Պամպար իւր չորս եղայրներով և մի ոսղին պաթաւ քաղաքութիւնն կը պատմէ. — Ելաք հինգս էայ, ես, Օվանէսը, Մինասը, Ակոր ու մեր Կիրօն, գեղի ցըրս դիմ սածայաղի կայնար. Օվանէսին ըսի, — գու կը յիրեձիս, ինց ինիմ օ նողծով իս. Եսս գողութիւնն է, զարկ, մի հայիր, գիսերը լուսնալու էրկու սահմաթ կար. Օվանէսը ծամիթէի, փիզատ մի տուա էկաւ, մէկ մէկ գերեզմանի պէս փորեցաք, ըէկը ձեռքը ծոցը էկաւ, հաեւաւ խողմէթքերը էկած ցէ, վայ — վայ, ըրըց, չէմազ ձիանու նարի ձէանը էկաւ, սախ — սախ — սախ, սասնը հինգ հազար մարդ թոփուան, օ տի ծաղպուին գեղը մնան, տեսայ Բասունայ Մահման աղան էկաւ, գիտուս վերգին կայնաւ, պարկայ օ ինձնու ցի տեսնայ. Թուրս կամաց կամաց քասեցին, տեսայ որ Խամայիլ բէկն ըրց, — սարուիցէք գեղին ցորս դիմ: Մահմուտ աղան քսեց ը թնձին, սեսիսանին թեթիւ կը թոխանմատ էկայ, կիւլէն ցցեր, անցեր Խսմալի բէկին ծիուն դպիր էր, էս խառ հաեւ. Օվանէսի սեսիսանի ձէանը էկաւ, մեր Կիրօն (իւր սղան) թուրս ցըրոցոցցէք հա կը զինէ. մի սահմաթ քսեց, հազկօ, լուսաց, թափեցաք կարմիր Վանուց ցըրը, հայեար, յետենիս մարդ զկայ, կանցեցի — Օվաննես, քեզ տեսնամ կը լորին ծառութեան օրն է, ա կէողինէ տէօնսիւկիմ: տեսայ օ Օվաննես թուրս ցըրոցցէք զարկաւ գլուխ կը, թրեց ես էալ վէարդին կը յրեցի, տղաքն էալ թմուն պաշլայիցին զինիլլ. ջարգեցաք, պարութը կիւլլէն թմաւ. — Կիրօ, ինց կինիս, հասիր էկոյ տես որ օլրուան մեր վրայ, ինց տի ինիք բէկն էալ էկաւ տեսաւ. օ հանիքիք քոնիկ տէրին զլուխոր, — հա բարամ օլասրզ, ըսըց, Նէջիա բէկ ամէն տարի Պամպարի հացն կը տար, մինչ ևր որ Փերին զայմախամ նստաւ, յորմէ յետոց չտուեց:

ԱՌ շարունակուի

Ս. Հայկունի.

## Ա Զ Գ Ա Յ Ո Ւ Ա Ն Ի Ւ Ա Հ Ի Չ .

Ք Ա Հ Ո Ն Ա Ց Խ Յ Ա Հ Ա Ն Ի Չ .

Վրահանացութեան վեհ կոչումն երկաւ մեծ պարտականութիւնների հետ է կապուած, մին զուտ կրօնական - բարոյական եւ միաը դաստիարակչական, տռաջին պարտականութեան մասն խօսքը մի ալ անգամի թողնելով այսօր հարկն ու ժամանակի հանգամները ստիպում են մեզ երկրորդի մասն խօսելու և մեր հոգեւոր հովիւններին մի յորդոր կարգալու:

Ջահանայի վեհագոյն տիպարը, մարգկութեան ֆրկիչը և նրա անմիջական աշակերտները ջահերի պէս լուսաւորում են դժուարին պաշտաման ուղին. քահանայք կարիք չունին վերացական հրամանների և հրահանգների, նըրանք պիտի հետեւեն իրենց նախատիպարի և նրա աշակերտների օրինակին կենդանի օրինակից աւելի լաւ ուսուցիչ չկայ. մինչ խրատներով ուսուցման ճանապարհն երկար և ամենի համար անցանելի չէ, օրինակով ուսանելու ճանապարհը կարճ է և արգասաւոր:

Մեր Փրկիչն ուսուցանում էր իւր կեանը ըով եւ խօսքով, նոյնը պատուիրեց նա և նրա աշակերտներին: «Գնացէք և ուսուցէք». նա և նրա աշակերտները կատարեցին այդ այնպիսի յաջողութեամբ, որով մինչև այն ժամանակ ոչ մի վարդապետ և փիլիսոփայ չէր ուսուցել և ոչ մի մանկավարժ ցարդ չէ կարողացել ուսուցանել:

Ի՞նչքան խրատական է մեզ համար սրբազան առաբեանների կեանքը. ի՞նչքան շատ բան կարող ենք մենք ուսանել նրանց առաբերութիւնից: Այդ տգէտ և խոյնուկ փարզապետները իրենց աշակերտ գարձրին այն ժամանակուան ամրող տչխարհը, տգէտ, խեղճ, ապականութեան մէջ թաղուած հրեայ, ասորին, հայ, պարսիկ, եղիստացի, հնդիկ ժողովրդից սկած մինչև փարմտամ և զիտութիւններով պարձեցող յոյնին և հռովմէացուն, ստրուկին, աղատագլուխին, պատրիկին և կայսերական տան գաւակներին: Եւ ի՞նչպիսի հաստատուն, անսասան և ամենայն ինչ ռովանդակող ուսուցումն էր այդ, որի դրած հիմունքը ու որ չէր կարողանում քանդել: Ապացոյնների կարիք չկայ, գրանցից վեհագոյնը այն անհամար նահատակութիւններն են, որոնցով պար ծենում է այսօր եկեղեցին:

Աշա այս է քահանայից անելիքը: Նրանք պիտի լինին ժողովրդի ուսուցիչները, առանց զիտութեան չկայ քրիութիւն և քրիստոնէութիւնն է:

Հայաստանեայց եկեղեցին միշտ հաւատարիմ է եղել առաքելաւանդ սկզբունքներին. ուսուցման և զիտութեան սկզբունքն ևս այն անխախտ և հիմնական սկզբունքն է, որով գոյութիւն է ունեցել և ունի մեր ա. եկեղեցին խաւար Աստիաի այն դժբաղդ անիիւնում որ Հայաստան անունն է կրել: Ըննեցեք քրիստոնեայ աղջերի պատմութիւնը և տեսէք ո՞ւր արդեօք քրիստոնէութիւնն առանց բանութեան և ուսուցմամբ է մատել: Ս. Լուսաւորիչը, որվ պարձենում ենք Հայերս հաւատի մեծագոյն նահատակներից և մեծ վարդապետներից մէկն էր. նա իւր անտանելի տանջանքների ժամանակ ուսուց և երբ յաջողութիւն չգտաւ, մահապարտի պատիճը կրել յանձն առաւ և երբ աստուածային շնորհիւ մահապարաների զրից հանուեցաւ, բժիշկ և բուժիչ Հանդիսացաւ մի թագաւորի և նրա մեծամեծների, նա գարձեալ նախ ուսուց և ապա միլրուց: Պատմագիրը չէ մոռացել աւանդել մեզ Համար նրա գասերը, որ այսօր էլ չեն կորցրել իրենց ոյժն ու կորովը Այս՝ Հայաստանեայց եկեղեցու կալմակերպողը մի կատարեալ առառաքեալ է եղել և նոյնն է աւանդել իւր յաջորդներին: Գիտեք արդեօք, ի՞նչն է եղել լուսաւորչի առաջին ձեռնարկութիւնը. դա Քրիստոնէական գրիոցի Հաստատութիւնն էր: Ուսուցում եւ դպրոց առաջին անգամ սուրբ Գօթփորն է հիմնել մեր հայքնելքում: Այդ դպրոցը չէ եղել արտօնեաների գարոց, գակատարեալ ժողովրդական դպրոցն էր, ուր ուսանում էին արքան, աւագանին և ռամփի: Միթէ այսքանով գոհացել է նա. ոչ այլ նա հիմնենք է զրել յարատե ուսուցման, նա է եղել իսկական քահանայարանների հիմնողը, նա էր, որ ապագայ քահանայացուներին ժողովեց, ուսումն առաւ, որ արժանաւոր լինին իրենց հոչման:

Այս օրինակի աղջեցութիւնն անպահահանելի է մեր եկեղեցական պատմութեան վերայ: Ս. Լուսաւորիչի բոլոր ժառանգները մեր աղջի առաջին ուսուցիչներն էին. ուուրբ Վրթանէսն ու Արիստակէսը Ներսէսն ու Սահակը: Կարող ենք արդեօք ա. Սահակի անունը առաջ և չլիշել որ նրան ենք պարտական այսօր մեր ամբողջ գոյութիւնը: Ի՞նչով կայ արդեօք այսօր հայն, եթէ ոչ իւր քրիստոնէական քաղաքակրթութեամբ, որի շնորհիւ մեղնով զրադուում է այսօր քաղաքակիրթ աշ-

խարհը: Ո՞վ տուաւ մեզ այն կենսունակութիւնը որով զիմացանք դարերի հարուածներին, ո՞վ սովորեցրեց մեզ որ քրիստոնէական հոգին չեն կարող սպանել, ինչպէս կարգում ենք այսօր Եղիշէի անգին վկայութեան մէջ:

Հինգերորդ գարուց սկսած կորցրեց հայն իւր բնական (Փիզիքական) ոյժն և ապրեց մինչեւ այսօր շնորհիւ այն քրիստոնէական դպրոցի, որի հիմք լուսաւորիչը դրաւ և շնորհը և Սահակը կանգնեց:

Հինգերորդ գարում և ապա եկան մեծամեծ փոթորիիներ և հեղեղներ, սրբեցին շատ աղջեր և շատ աղջերի փառքեր սակայն կանգուն մնաց Հայաստանեայց եկեղեցին շընորհիւ իւր ուսուցիչների, իւր հոգեոր առաջնորդների, որոնք մեզ ներքին զօրութեան այն ոյժը ցոյց տուին, որով կարող եղանք ամենայն անցաւոր բաներից վեր դասել հօգեռը, մտաւորականն ու համոզմունքը:

Հասաւ միջին գարն իւր խաւարով, արեմուաքը կոռու բռնուեցաւ արևելքի հետ և ո՞վ էր արեմանեան գնդերի հետ արևելեան հրոսակների գեմ կոռուողը գարձեալ հայը:

Նոր և նորագոյն գարերը զիտութիւն և քաղաքականութիւն բերին արեմուաքի համար ազատ ու երջանիկ կեանք ստեղծեցին Եւրոպայի համար, ո՞ն էր արդեօք այն արևելեան աղջը, որ հաղորդակից եղաւ այդ լուսաւորութեան, արևելքի համար միջնորդ հանդիսացաւ: Դարձեալ հայն էր այդ, շնորհիւ իւր քրիստոնէական քաղաքակրթութեան: Հնդկաստանում և Խաղաղական ովկիանի կղզիների և ափունքների վերայ բնակող ժողովուրդներին Եւրոպից արհեստների արգասիքներ բերողներին հայերն էին: Փարսկաստանի, Տաճկաստանի ու Ռիուսատանի յարաբերութիւնները տասն և հինգերորդ գարուց մինչեւ մեր գարը հայերի ձեռքառով էր կատարուում ի՞նչ բանի շնորհիւ էր այդ. եթէ ոչ այն ժառանգած զիտութեան, որ ունենք նախրնթաց գարերից: Բայց ո՞վ էր մեզ համար այդ զիտութիւնները բերողը, ո՞վ էր քաղաքակիրթ աշխարհի լուսոյ ծահը միշտ վաս պահողը, եթէ ոչ հայ եկեղեցին: Գիրի, գրականութիւն և զիտութիւն չէ անյատացել երբեք հայ եկեղեցու գարոցներից: Մի փաստ միայն հերիք է կոյրերին համոզելու համար, տպագլութեան զիւար գեռ չեն սկսել եւրոպական բոլոր աղջերը վայելել, որ հայ եկեղեցականները Ասիա փոխադրեցին այդ. մամուլի մասին գաղափար անգամ չունեին արևելցիք, որ ա-

ուաջին հանդէսը լոյս ածեց չնդկաստանում մի հայ քահանաց:

Այսպիսի փառաւոր անդեպի առաջ ի՞նչքան նուազումէ հետղիւտէ մեր այժմեան փինակի արժեքու ժամանակէ սմափուելու: Հայ քահանան թէպէտ և գեր շատ խոր անկիւններում միակ ուսուցիչն է, սակայն հրապառակից նա սկսել է յետ բաշուելու տեղի տալ իւր ջանքերով առաջ բերած աշխարհական ուսուցիչն: Սա էլ մի մեծ պարձանք է հայ եկեղեցու համար բայց սմոռանանք, որ մեր ժամանակ ոչ ոք իրաւունք ունի անցեալի փառքերով ապրելու, մեր պարտքն է մեշտ գէպի առաջ զնայ և ոչ երբէք կանգ առնել և գէպի յետ նայելով տնշարժ մնալ:

Գէպի յետ նայենք միան նրա համար, որ աւելի ոյժ առնենք առաջներս եղած խոյնդուններին լաղթելու համար: Այսօր տաւելի ևս քան երբէք կառիք ունինք քահանայութեան—ուսուցչութեան: Հայ քահանան ոչ կամագուրի զինուոր է Հռովմի քահանաների պէս և ոչ ծիսակատար պաշտօնեալ. նա ուսուցիչ է: Հաւ հասկանանք մեր պարտք:

«Գնացէք և ուսուցէք», ահա մեզ հրամայող ձանրու որին եթէ չյսենք, դատապարտութեան կնիք կրգուշմենք ձականներիս: Մշերժելով մերժում ենք մենք այն զրապարտութիւնը, որ հայ եկեղեցին պայտապան է եղել տղիտութեան և տգէտների: Այս զրապարտութիւնը մենք կամենում ենք մեծագոյն եռանդի հետեւանք համարել միայն: Հայր տեսնելով որ չէ կարողանում միանգամից հասնել յուսաւոր ազգերին, եռանդի շատութիւնից երեմն կայծակ և որոսումն է թափում մի կամ միւս եկեղեցական վարչութեան զիսին, մեզագրելով՝ որ նրանք յառաջ են կոչում տգէտներին: Բացառիկ գէպքերը չեն կարող առացող լինել, պէտք է ամենայն անգամ հիմունքները կը ազգատելու բնդունակ լինել երբ դատաստան ենք անում: Ահա արս է պակաս մեր եկեղեցական վարիչների քննադատներին:

Մի խնդիր պարզ է մեզ համար այսօր. հայ քահանան պիտի լինի Եւ հայ ազգի ուսուցչը, նախ այդ նրա իրաւունքն ու պարտականութիւնն է Եւ երկրորդ՝ հնչն այն պարզ պատճառաւ, որ հայր չէ կարող ալ ուսուցիչ ունենալ Եւ չունի իսկ:

Ի՞նչպէս պիտի հասնենք այս ցանկալի վիճակին, ի՞նչ անենք, որ հայ քահանան և իրապէս ուսուցիչ լինի և ոչ անուամբ, ահա մի խնդիր որ պիտի լուծէ եկեղեցական վարչութիւնն ու ժողովուրդը: Գործով զրապարտաւում:

կամեցողները պէտք է այս քննեն և ոչ պարսաւագէտ լինին ու կոլը քարոզիչներ փառամղերի համար:

Մի երկրորդ խնդիր ևս կայ, որ նոյնպէս նշանաւոր է. ի՞նչ և ի՞նչպէս պիտի ուսուցանեն քահանայք: Այդ մասին մի այլ անգամ:



## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՈՒԹԻՒՆ:

### ՄԱՅՐ ԱԹՈՌ:

ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՆԴԵԱՆ  
ՏԱՐԵԴԱՐԵՅ:

Վորիի կին, ազգիս ԱԵՀԱՓՈԽ ՀԱՅՐԱՊԵ-  
ԹԻ, Տ. Տ. Մկրտչի, ամենան Հայոց Կաթուղիկոսի  
ծննդեան 75-ամեայ տարեգարձի օրը Ա. Էջմիած-  
նի միաբանութիւնը տօնեց մեծաշուրջ հանդիսափու-  
Հանդիսաւոր պատարագին, որ արաւ Գերապատիւ-  
Գրիգորի եպիսկոպոսը, ներկայ Էր բոլոր միաբա-  
նութիւնը, ձեմարանն ու ժողովրդի խուռան բազ-  
մութիւնը ԱԵՀԱՓՈԽ Հայրիկն ըստ իւր սովորու-  
թեան թուլ չտուաւ միաբանութեան հայրապետա-  
կան մաղթանքը ԱԵՀԱՐԱՆՈՒՄ կատարել, ալ զինի  
ու պատարագի, Խման ս. սեղանի առաջ ներկայ  
եղաւ հայրապետական սրտառուչ մաղթանքին և  
ապա բոլոր միաբանութիւնն ու աշակերտներն մեր-  
ձենալով ի համբոյր նորին Սրբութեան Ծին, ար-  
ժամացան հայրապետական յատուկ օրհնութեան:

Զինի ս. պատարագին ԱԵՀԱՐԱՆՈՒՄ տեղի  
ունեցաւ աշխարհական նորհաւորդների ընդունե-  
լութիւնը:

Միաբանութեան սեղանատանը հանդիսաւոր  
Ճաշին նորին Սրբութիւնը համեցաւ սեղանակից  
լինել միաբանութեան. Հայրապետական սեղանին  
հրաւիրուած էին նաև Գ. Ճեմարանի ուսուցիչներն  
և հասարակութեան պատգամաւորները:

ԱԵՀԱՓՈԽ Հայրիկի կենաց բաժան առաջար-  
էց Բարձր Սրբազն Սիւրբիաս Աբբեսիսկոպոսը մի  
իմաստայից ճառով, որից յետոյ նորին ԱԵՀԱՓՈԽ  
Համեցաւ մի յորդոր խօսելու հանդիսա-  
կաններին, որոնք յոսնկայս և ախնածութեամբ լը-  
սեցին Հայրապետական յորդորը ներեկոյեան հրա-  
վառութիւն կար վանքի բակումն և Ճեմարանի շի-  
նութեան մէջ ու ընդարձակ բակումն:

ԱԵՀԱՓՈԽ Հայրապետի ծննդեան տարեգար-  
ձի առթիւ աշակերտական երեկոյթ կար և Ճեմա-  
րանում, ուր ներկայ էին ուսուցչական խումբն ու  
միաբանութեան անգամներից ունանք. Ա. ս. հանդի-  
սին առանձին ոգեսրութիւն պատճառեց ՀԱԳԿԱՍ-  
ՏԱՆԻ նոր ժամանած Տէր Թօրոս Ժուղացիցին, որ  
մի զգածուած ճառով պատկերացրեց ԱԵՀԱՓՈԽ  
Հայրիկին իրրեւ հայ մարդ ու հայ եկեղեցական,  
երջանիկ համարելով Ճեմարանի սաներին, որ մի  
այդպիսի մեծ Հովանաւորի խնամքի տակն են զար-  
գանում:

— ԱԵՀԱՓՈԽ Հայրապետի Ծննդեան տարե-  
գարձի առթիւ հայանակ վայրիրից բազմաթիւ շը-  
նորհաւորական հեռագիրներ ժամանեցին: